Վայք համայնքի ղեկավար պարոն Մ. Մաթևոսյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

«ԱՐԵԳ ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ 6ՄՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ

Հարգելի պարոն Մաթևոսյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Արեգ Էներգիա» ՍՊ ընկերությունը նախատեսում է Վայք խոշորացված համայնքի Սարավան բնակավայրի տարածքում իրականացնել 6ՄՎտ հզորությամբ արևային կայանի և 7000ԿՎԱ հզորությամբ ենթակայանի կառուցման աշխատանքներ: Մանրամասները ներկայացված են ստորև.

Ձեռնարկողի անունը (անվանումը)՝ «Արեգ Էներգիա» ՍՊԸ
Գտնվելու վայրը (Հասցե)՝ ՀՀ, ք. Երևան 0010, Կենտրոն, Հյուսիսային Պողոտա /շենք 12 / 23 բն.
Նախատեսվող գործունեության անվանումը՝ ՇՄԱԳ և փորձաքննության մասին օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան՝ հողմաէլեկտրակայաններ՝ 5 ՄՎտ եւ ավելի ընդհանուր հզորությամբ, ***արեւային էլեկտրակայաններ՝ 3 հա եւ ավելի տարածք զբաղեցնող*** կամ լողացող արեւային կայանքներ
Նպատակը՝ Էլեկտրական էներգիայի արտադրություն
Համառոտ նկարագիրը՝ Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Վայոց ձորի մարզի, Վայք խոշորացված համայնքի Սարավան բնակավայրում գտնվող մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքների վրա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները կցված են): Ըստ ներկայացված սեփականության վկայականների, նշված տարածքներում առկա չեն որևէ տիպի շենք-շինություններ:

«Արեգ Էներգիա» ՍՊ ընկերությունը նախատեսում է կառուցել 6ՄՎտ հզորությամբ արևային կայան և 7000ԿՎԱ հզորությամբ ենթակայան ներկայացված տարածքներում, և մոտ 1200մ երկարությամբ 6ԿՎ հզորությամբ երկմալուխանի գծով իրականացնել միացում գործող 110/10/06ԿՎ «Որոտան 2» էլեկտրահաղորդման գծին: Ներկայացված Ծրագրի նախագծող ընկերությունն է՝«ԷկոՎիլ» ՍՊԸ:

Նախատեսվող գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, Վայք խոշորացված համայնք, Սարավան բնակավայր:

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ.

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ (4 վկայական, յուրաքանչյուրը՝ 2 էջ),
2. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա (7 էջ),
3. Բաշխման ցանցին միացման վերաբերյալ տեղեկանք տրամադրված «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից (1 էջ):